ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/11

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/297-2022 գրությամբ «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 30.12.2021թ. թիվ Ε/40/3411-21 գրության հիման վրա, 10.01.2022թ. թիվ 26/26-1/297-2022 գրությամբ նախաձեռնել է «Սենտրալ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Սենտրալ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 17.01.2022թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.12.2021թ. թիվ Ե/40/3411-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստում արձանագրվել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1) թերի է ներկայացված:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցել է «Սենտրալ» ՍՊԸ-ին առկա թերության վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է շտկում, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում ներառված 1-7, 9, 11-12, 15, 18-21 չափաբաժինների ապրանքների տեխնիկական բնութագրերը դիտարկվել են որպես հրավերի պահանջներին անբավարար և մերժվել են՝ Կարգի 42-րդ կետի համաձայն:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և Կարգի 45-րդ կետի պահանջներով՝ Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 17.01.2022թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/11 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/11 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Սենտրալ» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21-28.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1 բացակայում է Հավելված 1-ով նշված չափաբաժինների առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:
4. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 1-7, 9, 11-12, 15. 18-21 չափաբաժինների մասով մերժելու վերաբերյալ, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից Հավելված 1.1-ով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը Ընթացակարգի 1-7, 9, 11-12, 15. 18-21 չափաբաժինների մասով չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

5. «Սենտրալ» ՍՊԸ-ի գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 12.01.2022թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/02 ծածկագրով իրավապարտադիր որոշում, որի համաձայն՝ պարտավորեցվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացված որոշումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/297-2022 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 30.12.2021թ. թիվ Ε/40/3411-21 գրությունը և կից փաստաթղթերը և հիմք ընդունելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 12.01.2022թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/02 իրավապարտադիր որոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը

գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին...:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքեր:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21-28.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1 բացակայում է Հավելված 1-ով նշված չափաբաժինների առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 1-7, 9, 11-12, 15. 18-21 չափաբաժինների մասով մերժելու վերաբերյալ, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից Հավելված 1.1-ով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը Ընթացակարգի 1-7, 9, 11-12, 15. 18-21 չափաբաժինների մասով չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

«Սենտրալ» ՍՊԸ-ի գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 12.01.2022թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/02 ծածկագրով իրավապարտադիր որոշում, որի համաձայն՝ պարտավորեցվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացված որոշումը, այն հիմնավորմամբ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտի մերժման վերաբերյալ որևէ հիմք չի նշվել, որը հնարավորություն կտար գնահատելու թե Ընկերության կողմից ներկայացրած ԳՕՍՏ-երի համարժեքությունը ստուգելիս Պատվիրատուն ինչ պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալների և փաստերի վրա է հիմնվել:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է</u>, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:***

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ կետի համաձայն՝ ***Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:***

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ ***Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:***

Վերոնշյալ իրավական կարգավորումների և փաստական հանգամանքների հիման վրա արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ իրավապարտադիր որոշմամբ արդեն իսկ դադարեցվել է ՍՑ-ՆԳ-2022/11 ծածկագրով ընթացակարգը նախաձեռնելու համար հիմք ծառայած Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստի գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/297-2022 գրությամբ «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**